



ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան

2016

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	4
ԵԳՊԱ-Ի ՏԵՍԼԱԿԱՆԸ	7
ԵԳՊԱ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.....	7
ԵԳՊԱ-Ի ԱՐԺԵՔՆԵՐԸ.....	8
ԵԳՊԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
ԵԳՊԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	8
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	15
Կերպարվեստի ֆակուլտետ.....	15
Գեղանկարչություն	15
Քանդակագործություն.....	15
Գրաֆիկա.....	16
Կերպարվեստի պատմություն և տեսություն	16
Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ.	17
Դիզայն.....	17
Համակարգչային գրաֆիկա.....	17
Հագուստի մոդելավորում	18
Կիրառական արվեստ	18
Հետազոտողի ծրագիր/Ասպիրանտուրա.....	19
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿԱՌՈՒՅՑ	21
ԵԳՊԱ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	22
ԵԳՊԱ որակի ապահովման կառույցը.....	23
ԵԳՊԱ ՈԱ կենտրոն (կառուցվածքն ու գործառնությունները)	23
Ինքնավերլուծությունը՝ որպես ՈԱ գործիք.....	25
Ինքնավերլուծության գործընթացի նկարագրություն	26
ԵԳՊԱ ՈԱ արտաքին գործընթացները	27
ԵԳՊԱ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	28
Մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովումը.....	28
ՄԿԾ-երի մշտադիտարկում, վերանայում, նոր ծրագրերի կազմում	28
Ուսումնառության և դասավանդման գործընթացը	30
Ուսանողի գնահատում	30
Աջակցություն ուսանողներին.....	31
ՈԱ գործընթացները վարչարարության ոլորտում	33

Ընդունելություն.....	34
Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման գործընթացը.....	35
Մասնագիտական աճին նպաստող այլ մեխանիզմներ.....	37
ԵԳՊԱ հաշվետվողականության կարգ.....	37
Շահակիցների ներգրավումը ԵԳՊԱ-ի ՈԱ գործընթացներում.....	38
Տեղեկատվության տարածում	39
Հետազոտություն	39
Ծառայություն հասարակությանը	41
Ցուցադրությունների կազմակերպում	41
Մասնակցություն ցուցահանդեսներին.....	41
Դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանություն	41
Կրթություն՝ ողջ կյանքի ընթացքում.....	42
Նախապատրաստական դասընթացներ	42
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ	43
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	46
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	46

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցի նպատակն է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ ԵԳՊԱ) որակի ներքին ապահովման գործընթացների ուղղորդումն ու բարելավումը: Ուղեցույցը նախատեսված է կրթական համակարգի շահակիցների համար /ուսանող, պրոֆեսորադասախոսական կազմ, վարչատնտեսական կազմ և այլ/, ովքեր անմիջականորեն առնչվում են կրթական համակարգին և կրթության որակին:

Ուղեցույցը համահունչ է միջազգային և ՀՀ իրավական հիմքերին, ինչպիսիք են՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման չափանիշերն ու ուղենիշերը (ԵԿՉՈԻ), «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված բարձրագույն կրթության որակի ապահովման չափանիշերն ու ուղենիշերը և ԵԳՊԱ առաքելությունը, կանոնադրությունը, ռազմավարությունը:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1945 թ.-ին հիմնադրված Երևանի պետական գեղարվեստի ակադեմիան իր գոյության տասնամյակների ընթացքում ձևավորել է մնայուն արժեքներ, որոնք միավորում են դասախոսների և ուսանողների մի քանի սերունդ, բնորոշելով ակադեմիայի բացառիկ դերը հայ մշակույթի զարգացման գործում:

Ակադեմիան մինչև 1994 թ.-ը գործել է Թատերական ինստիտուտի հետ համատեղ, այնուհետև առանձնացել՝ որպես ինքնուրույն ԲՈԻՀ:

Բոլոնիայի գործընթացի համաձայն՝ 2007 թ.-ից ԵԳՊԱ-ն անցել է ուսուցման եռաստիճան համակարգի և Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) վրա հիմնված նոր, շարունակաբար բարելավվող ուսումնական ծրագրերի իրականացմանը:

ԵԳՊԱ-ն առաջարկում է մի շարք ծառայություններ, որոնք նպաստում են ուսանողների ուսումնառությանը ակադեմիայում: Մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ակադեմիայում ներդրվում է որակի ապահովման ներքին համակարգ, որի արդյունավետ

կիրառվումը կնպաստի ակադեմիայի կողմից շնորհվող որակավորումների ճանաչմանը ՀՀ-ում և արտերկրում:

ԵԳՊԱ-ին կից գործում է «Ալբերտ և Թովե Բոյաջեան» ցուցասրահը, որը բացվել է 2001թ.-ի մայիսի 1-ին: Ցուցասրահը նպատակ ունի ոգևորել և ոգեշնչել դասախոսներին և ուսանողներին՝ իրենց արվեստագիտական կարիերայի զարգացման ճանապարհին: Ցուցասրահի բացումը ազդարարվեց Հայաստանի վաստակավոր նկարչուհի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի պրոֆեսոր Արփենիկ Նալբանդյանի (1916-1964) անհատական ցուցահանդեսով:

Ցուցասրահում մշտապես ցուցադրվում են ինչպես Հայաստանում մեծ ճանաչում ունեցող արվեստագետները, այնպես էլ նրանց ուսանողները: Ցուցասրահում առ այսօր կազմակերպվել են անհատական և խմբակային ցուցահանդեսներ՝ տեղի և արտասահմանցի արվեստագետների մասնակցությամբ:

ԵԳՊԱ-ում կրթությունն իրականացվում են բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի ծրագրերով, համապատասխանաբար չորս, երկու և երեք տարի տևողությամբ: Ակադեմիայի երկու ֆակուլտետներում առաջարկվում են բակալավրի և մագիստրոսի հետևյալ կրթական ծրագրերը՝

Կերպարվեստի ֆակուլտետ՝

Գեղանկարչություն

Քանդակագործություն

Գրաֆիկա

Կերպարվեստի պատմություն և տեսություն

Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ

Դիզայն

Համակարգչային գրաֆիկա

Հագուստի մոդելավորում

Կիրառական արվեստ:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերը հիմնադրվել են 1997 թվականին և առանձնանում են իրենց աշխարհագրական յուրահատուկ դիրքով: Մասնաճյուղերը ստեղծվել են՝ հաշվի առնելով տարածաշրջանի պահանջները: Հաստատություններն ապահովված են անհրաժեշտ արվեստանոցներով, լաբորատորիաներով և այլ հարմարություններով:

Գյումրու մասնաճյուղն առաջարկում է ուսուցում բակալավրի և մագիստրոսի հետևյալ կրթական ծրագրերով՝

Բակալավրի կրթական ծրագրեր.

- գեղանկարչություն
- քանդակագործություն
- գրաֆիկա
- կերպարվեստի պատմություն և տեսություն
- հագուստի մոդելավորում
- կիրառական արվեստ
- դիզայն

Մագիստրոսի կրթական ծրագրեր.

- գեղանկարչություն
- քանդակագործություն
- գրաֆիկա
- հագուստի մոդելավորում:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղն առաջարկում է **Կիրառական արվեստ** մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագիրը:

ԵԳՊԱ-ն սերտորեն համագործակցում է ՀՀ և արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մի շարք ոչ ուսումնական կազմակերպությունների հետ: Դրանց թվում են՝

- ✓ ՀՀ նկարիչների միություն
- ✓ ՀՀ դիզայներների միություն
- ✓ Հայաստանի ազգային պատկերասրահ
- ✓ Ժամանակակից արվեստի թանգարան

- ✓ ՀՀ պատմության թանգարան
- ✓ Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարան
- ✓ Ֆրանսիայի Մարսել քաղաքի գեղարվեստի բարձրագույն դպրոց
- ✓ Ֆրանսիայի Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց
- ✓ Ֆրանսիայի Լիմոժ-Օբյուսոն քաղաքի արվեստի բարձրագույն պետական դպրոց
- ✓ Ֆրանսիայի Լիոն քաղաքի գեղարվեստի ազգային դպրոց
- ✓ Չեխիայի Հանրապետության Զլինի Թոմաս Բաթա համալսարան
- ✓ Շտիգլիցի անվան արվեստի պետական ակադեմիա (Սանկտ-Պետերբուրգ)
- ✓ Լատվիայի ազգային ակադեմիա (Ռիգա, Լատվիա)
- ✓ Ինֆորմացիոն համակարգերի մենեջմենթի ինստիտուտ (Ռիգա, Լատվիա)
- ✓ Ֆլորենցիայի Գեղարվեստի ակադեմիա
- ✓ Կիևի Գեղարվեստի և Ճարտարապետության Ազգային Ակադեմիա
- ✓ Բռաունշվեյգի Գեղարվեստի Համալսարան
- ✓ Լվովի Արվեստի Ազգային Ակադեմիա
- ✓ Էստոնիայի արվեստի ակադեմիա
- ✓ Բաթումի արվեստի պետական համալսարան և այլ:

ԵԳՊԱ-Ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

ԵԳՊԱ-ն բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի նպատակն է կրթել հայ արվեստը զարգացնող և հայկական մշակութային արժեքները համամարդկային կոնտեքստով տարածողներ:

ԵԳՊԱ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- Բարձր որակավորման մասնագետներ պատրաստել արվեստի տեսության, կերպարվեստի, դիզայնի, դեկորատիվ կիրառական արվեստի բնագավառների համար:
- Ստեղծագործական և կրթական գործընթացը համապատասխանեցնել հասարակական կյանքի և մշակույթի զարգացման արդի պահանջներին:
- Ուսանողներին նախապատրաստել մասնագիտական առաջընթացին և հարատև ուսուցմանը՝ նոր պահանջներին համապատասխան:
- Նպաստել ոչ միայն արվեստագետի, այլ նաև քաղաքացու ձևավորմանը:
- Դառնալ տարածաշրջանում ոչ միայն ուսումնական, այլ նաև մշակութային զարգացման կենտրոն:

- Ուսուցանել և քարոզել ոչ միայն ազգային, այլ նաև համամարդկային մշակութային արժեքները:

ԵԳՊԱ-Ի ԱՐԺԵՔՆԵՐԸ

Ակադեմիայի հիմնական արժեքները բխում են առաքելությունից, դրանք են՝

- Հայ արվեստի առանձնահատկությունների պահպանում, զարգացում և տարածում
- Ուսանողակենտրոն ուսուցում
- Կայուն զարգացում՝ ժամանակի պահանջներին զուգահեռ
- Ինտեգրում համաշխարհային կրթական համակարգին
- ՄԿԾ-երի կատարելագործում՝ աշխատաշուկայի համար անհրաժեշտ որակավորումներով շրջանավարտներ թողարկելու համար
- Շահակիցների գոհունակություն:

ԵԳՊԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխումներ և արդիականացում
- Ուսուցման որակի ապահովման գործընթացների հստակեցում և իրականացման մեխանիզմների մշակում
- Ակադեմիայի գործունեության հետազոտական ոլորտի զարգացում
- Ակադեմիայի միջազգային կապերի զարգացում և ուսանողների շարժունության ակտիվացում
- Հասարակությանը մատուցվող ծառայությունների ընդլայնում և դրանց իրականացման ուղիների հստակեցում:

ԵԳՊԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը գործում է ՀՀ կառավարության 2005 թ. սեպտեմբերի 15-ի թիվ 1715-Ն որոշման հիման վրա հաստատված կանոնադրության համաձայն, որի գործունեությունը նպատակաուղղված է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմանը: Ակադեմիայի գործունեության առարկան և նպատակը կրթական, գիտական, փորձագիտական և հրատարակչական գործունեության իրականացումն է: Ակադեմիայի

ինդիրները, իրավունքներն ու իրավասությունները, ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները սահմանված են ԵԳՊԱ կանոնադրության մեջ:

Ակադեմիայի կառավարումն իրականացվում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության և ԵԳՊԱ կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման ու կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, ակադեմիայի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծմանն ակադեմիայի անձնակազմի և ուսանողների մասնակցության սկզբունքների հիման վրա:

Ակադեմիայի կառավարման խորհուրդը կառավարման մարմին է, որ ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ խորհրդի անդամների մասնակի շրջափոխությամբ: Անդամների թիվը 24-ն է՝ պրոֆեսորա-դասախոսական կազմ՝ անդամների 25 %-ը, ուսանողություն՝ անդամների 25 %-ը, հիմնադրի անունից վարչապետի առաջարկած պետական պաշտոնյաներ՝ անդամների 25 %-ը, գիտության, մշակույթի, տնտեսության տարբեր բնագավառների, գործատուների ներկայացատչիչներ՝ 25 %-ը: Կառավարման խորհրդի կազմը հաստատվում է ՀՀ վարչապետի կողմից: Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ և համարվում են իրավագոր խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահը՝

Ա. Նախագահում է նիստերը,

Բ. Ապահովում է խորհրդի նիստերի աշխատանքների բնականոն իրականացումը,

Գ. Սահմանում է ելույթների հերթականությունը և ժամանակը:

Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

Ա. Ակադեմիայի ռեկտորի ընտրությունը,

Բ. Ռեկտորի կողմից ներկայացվող ակադեմիայի գործունեության մասին տարեկան հաշվետվության գնահատումը,

Գ. Ակադեմիայի բյուջեի հաստատումը,

Դ. Ակադեմիայի ռազմավարական ծրագրի հաստատումը,

Ե. Ակադեմիայի կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունը հիմնադրին ներկայացնելը:

Ակադեմիայի գիտական խորհուրդը ձևավորվում է ԵԳՊԱ կանոնադրության համաձայն: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ակադեմիայի ռեկտորը, պրոռեկտորը, գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, ակադեմիայի մասնաճյուղերի, ուսումնական և գիտական այլ ստորաբաժանումների ղեկավարները, ուսանողական խորհրդի նախագահը և ֆակուլտետների կողմից ընտրված անդամները:

Գիտական խորհուրդը լուծում է ակադեմիայի գիտամանկավարժական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է, նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

Գիտական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում՝

Ա. Հաստատում է իր գործունեության կանոնակարգը,

Բ. Հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում, ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը,

Գ. Քննարկում է ակադեմիայի՝ օտարերկրյա պետությունների հետ կապերի ուղղությունները, միջազգային համագործակցության ծրագրերը և ակադեմիայի կողմից կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերը,

Դ. Մշակում է դիմորդների ընդունելության կանոնակարգի նախագծեր և ներկայացնում լիազոր մարմինին,

Ե. Ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ակադեմիայի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ,

Զ. Հաստատում է ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնակարգերն ու ներքին կարգապահական կանոնները,

Է. Քննարկում է ակադեմիայի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը,

Ը. Հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների, որոնք ներկայացվում են լիազոր մարմինին,

Թ. Քննարկում է ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները,

Ժ. Շնորհում է ակադեմիայի գիտական և պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է ակադեմիայի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ,

ԺԱ. Հաստատում է ակադեմիայի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների կարգերը,

ԺԲ. Իրականացնում է ակադեմիայի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են կանոնադրությունից:

Ռեկտորատ

Ռեկտորատն ակադեմիայի ռեկտորին կից և նրա նախագահությամբ գործող խորհրդակցական մարմին է, որի կազմի մեջ մտնում են պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը, գիտական քարտուղարը, ֆակուլտետների դեկանները, ակադեմիայի ուսումնական և այլ ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ռեկտորի կողմից նշանակված անձիք:

Ակադեմիայի **պրոռեկտորները** նշանակվում են ռեկտորի հրամանով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ակադեմիայի **մասնաճյուղի տնօրենն** ընտրվում է մասնաճյուղի խորհրդի նիստում՝ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել մասնաճյուղի տնօրենի պաշտոնում: Մասնաճյուղի **տնօրենի տեղակալները** նշանակվում են մասնաճյուղի տնօրենի հրամանով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մարդկային ռեսուրսների բաժնի գործառույթները ներառում են անձնակազմի հավաքագրումը և աշխատատեղերի համալրումը, աշխատանքի կատարողականի արդյունավետության և անձնակազմի կատարելագործման համակարգերի կառավարումը, անձնակազմի ծանրաբեռնվածության և նորմաների վերահսկումն ու պահպանումը, նոր աշխատակիցների խորհրդատվության և վերապատրաստումների կազմակերպումը, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակումն և համապատասխան գործավարությունը, աշխատակիցների անվտանգության, սոցիալական ապահովության և առողջությանը վերաբերվող հարցերի կարգավորում, ակադեմիայի կողմից բարեգործությունների կառավարումը, աշխատակիցներին օգնության և կոնսուլտացիաների տրամադրումը,

աշխատակիցների նկատմամբ պարզևատրման կամ տույժի քաղաքականության կիրառումը:

Ֆինանսատնտեսական մաս հիմնական գործառույթներն են՝ ԵԳՊԱ գնումների կառավարումը համաձայն ՀՀ գնումների քաղաքականության, եռամսակային միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմակերպումն ու ներկայացումը, հաշվապահական և վերահսկողական ընթացակարգերի սահմանումն ու իրականացումը, բյուջեի վերլուծությունն ու վերանայումը, եկամուտների, ծախսերի, աշխատավարձի հաշվարկների, հաշիվների և այլ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի գործավարությունը, եկամուտների և ծախսերի վերահսկումը, հաշվապահական հաշվառման քաղաքականության ներկայացումը աշխատակիցներին և մյուս շահակիցներին, համագործակցությունը ներքին և արտաքին աուդիտների հետ, աշխատավարձի հաշվարկը, հիմնական միջոցների հաշվառումն ու մաշվածության հաշվարկը, բանկային գործառույթները, այլ ֆինանսատնտեսական հարցերի լուծումը:

Ուսումնական վարչությունն իրականացնում է ԵԳՊԱ-ի կրթական գործընթացի կազմակերպումը/ապահովումը, կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացների համակարգումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական ռեգիստրի աշխատանքների իրականացումը՝ ուսանողների հետ կապված ամբողջ տեղեկատվության հավաքագրումը, մուտքագրումը, պահպանումը և հաշվետվությունների պատրաստումը: **Ուսումնական մասի** գործառույթներն են՝ ամբիոնների ուսումնական բեռնվածության հաշվարկումը, դասաբաշխումների հաստատումը, դասացուցակների հաստատումը, պրակտիկաների կազմակերպումը, քննաշրջանների գրաֆիկների հաստատումը, ուսումնական պլանների մշակումը և բարելավումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական գործընթացի իրականացման վերահսկումը:

Ուսումնական ռեգիստրի գործառույթներն են՝ ուսանողների հրամանագրումը, ուսանողների գնահատականների գրանցումն ու պահպանումը, ռոտացիան, ուսանողների տեղափոխությունները, դիպլոմների, համապատասխան տեղեկագրերի և այլ փաստաթղթերի կառավարումը:

Արտաքին կապերի բաժինը տրամադրում է տեղեկատվական ծառայություններ և հանդես է գալիս որպես միջնորդ ԵԳՊԱ-ի և հայաստանյան և արտասահմանյան հաստատությունների միջև՝ տրամադրում է

խորհրդատվություն հանրապետական և միջազգային գիտական և մասնագիտական իրադարձությունների վերաբերյալ, մշակում է ծրագրեր և աջակցում միջազգային ծրագրերի իրականացմանը և կառավարմանը, աջակցում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, հաստատում է կապեր արտասահմանյան հաստատությունների հետ, կարգավորում է արտասահմանյան ուսանողների ուսումը և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքը և կացությունը ՀՀ-ում, համակարգում է արտերկրից եկող ուսանողների վիզաների և այլ հարցերը, մշակում, խորհրդատվություն է տրամադրում ԲՈՒՀ-ի միջազգայնացման քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ, կարգավորում է ԵԳՊԱ-ի արտասահմանյան այցելուների հետ նախնական համաձայնությունները և ծրագրերը, հավաքագրում է համապատասխան տեղեկություններ միջազգային դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ և միջազգային համագործակցության հնարավոր ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև տարածում է այդ տեղեկատվությունը ԵԳՊԱ-ի շահակիցների շրջանում:

Մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման կենտրոնը /ՄԿՏԿ/ ստեղծվել է «ԵԳՊԱ –աշխատաշուկա» կապի ընդլայնման ու ամրապնդման և ակադեմիայի ուսանողների, շրջանավարտների, գործատուների մասին տվյալների բազայի կառավարման նպատակով: ՄԿՏԿ-ն իրականացնում է աշխատաշուկայի ուսումնասիրություն, ուսանողների աշխատանքի տեղավորման և խորհրդատվական ծառայություններ, քաղաքական ծառայողների վերապատրաստում, տվյալների հավաքագրման մեխանիզմների մշակում, տվյալների բազայի ընդլայնում, տվյալների նախնական վերլուծություն, խորհրդատվություն ուսանողների հետագա կարիերայի վերաբերյալ, շրջանավարտների և գործատուների հետ կապի հաստատում, աշխատաշուկայում ԵԳՊԱ ՄԿԾ-երի ներկայացում՝ տարբեր լրատվական միջոցներով: Կենտրոնը նաև շնորհանդեսներ է կազմակերպում ավագ դպրոցներում, ներկայացնում ԵԳՊԱ-ն՝ դիմորդներ ներգրավելու համար:

Որակի ապահովման կենտրոնը ակադեմիայի կառուցվածքային **անկախ** ստորաբաժանում է, որը ենթարկվում է ուղղակիորեն ռեկտորին: Կենտրոնի անկախությունը երաշխավորում է ինքնագնահատման անաչառությունը: Կենտրոնի աշխատանքները կարգավորվում են ակադեմիայի ռեկտորի կողմից հաստատված ՈԱ կենտրոնի կանոնակարգի դրույթներով: ՈԱ կենտրոնի կառուցվածքն ու գործառույթները մանրամասն նկարագրված են էջ 23-ում:

ԵԳՊԱ-ում գործում է արվեստի պատմության, մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ հազեցած **գրադարան**: Գրադարանի աշխատակիցներն իրականացնում են հետևյալ գործողությունները՝ պլանավորում և ներկայացնում են գրադարանի գործողությունները և տեղեկատվական ծառայությունները, ապահովում են գրադարանի հավաքածուների և ռեսուրսների հասանելիությունը ուսանողությանը և պրոֆեսորադասախոսական կազմին, կազմակերպում են գրադարանի նյութերի պահպանումը, տրամադրում են խորհրդատվական ծառայություններ գրադարանից օգտվողներին, ապահովում են գրադարանային ռեսուրսների վնասվածքների վերացումը, կատարում են վիճակագրություն, ներկայացնում են պահանջարկ ունեցող գրականության ցանկը: Առաջիկայում նախատեսվում է գրադարանային ռեսուրսների թվայնացում:

2014 թ. նոյեմբերին շրջանակներում ԵԳՊԱ-ում բացվեց **Հետազոտական կենտրոնը**: Կենտրոնի գործունեության նպատակն է կրթական երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի բարեփոխումների իրականացումն ըստ Զալցբուրգյան սկզբունքների: Կենտրոնը զբաղվում է Ակադեմիայի գիտահետազոտական ուղղությունների ռազմավարության մշակմամբ, ԵԳՊԱ դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմամբ և համակարգմամբ, Ակադեմիայի գիտական հանդեսի՝ Տարեգրքի հրատարակչական աշխատանքներով:

Ակադեմիային կից գործում է **ցուցասրահը**, որը հնարավորություն է ընձեռում արվեստագետ դասախոսներին, սկսնակ արվեստագետներին, ուսանողներին ցուցադրել իրենց ստեղծագործությունները: Ցուցասրահի աշխատակիցները պլանավորում և կազմակերպում են ցուցադրությունները, լուսաբանում են ցուցասրահում կայացած և կայանալիք միջոցառումները ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքում և լրատվական այլ միջոցներով, կազմակերպում քննարկումներ և հանդիպումներ արվեստաբանների և արվեստագետների հետ:

Ակադեմիայում գործում են նաև **պարետային ստորաբաժանումը** և **բուժ. կետը**:

ՏԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ակադեմիայում գործում են երկու ֆակուլտետներ, հետևյալ մասնագիտություններով՝

Կերպարվեստի ֆակուլտետ.

Գեղանկարչություն

4 տարի բակալավրիատ/ատկա

2 տարի մագիստրատուրա/ատկա

ԵԳՊԱ-ն առաջարկում է գեղանկարչություն մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր՝ ուսուցման ատկա հիմունքով: Կրթական ծրագրերի հիմքում ընկած են դասական և ազգային մշակութային ավանդույթներն ու արժեքները: Ծրագրերը մշակված են ժամանակակից տեխնոլոգիաների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա: Ուսանողները սովորում են գծի և գույնի միջոցով ստանալ ծավալատարածային պատկերներ, օգտագործել պլաստիկ ծավալներ, գտնել կոմպոզիցիոն կառուցվածքի ու գունային ինքնատիպ լուծումներ: Հատուկ ուշադրություն է դարձվում բնորդի հետ աշխատանքին, քանի որ բնորդի ճիշտ պատկերումն ու կոմպոզիցիայի գունային գամմայի ընտրությունը գեղանկարչության մասնագիտական վարպետության հավաստի գրավականն են:

Բակալավրի կրթական ծրագրի 3-րդ տարվանից սկսած՝ դասավանդման և ուսումնասիրության գործընթացը հիմնականում իրականացվում է արվեստանոցներում, որոնք ղեկավարվում են անվանի արվեստագետների կողմից: Մագիստրոսական կրթական ծրագիրը կենտրոնանում է ուսանողի ոչ միայն ստեղծագործական, այլև քննադատական մտածողության, ինչպես նաև հետազոտական ունակությունների զարգացման վրա:

Քանդակագործություն

4 տարի բակալավրիատ/ատկա

2 տարի մագիստրատուրա/ատկա

ԵԳՊԱ-ն առաջարկում է Քանդակագործություն մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր՝ ուսուցման ատկա հիմունքով: Կրթական ծրագրերում հիմնական շեշտը դրվում է այն հմտությունների զարգացման վրա, որոնք թույլ կտան ստեղծել հաստոցային, մոնումենտալ, անիմալիստական և դեկորատիվ քանդակներ: Ուսանողները կատարում են անտիկ քանդակների կրկնօրինակներ: Քանդակում են բնորդներ, ինչպես առանձին ֆիգուրատիվ, այնպես էլ հորինվածքային աշխատանքներում: Ուսանողներն ուսումնասիրում են մարդու մարմնի կառուցվածքը, համաչափությունը և պլաստիկան: Ուսումնասիրության ընթացքում նրանք ձեռք են բերում կերպարի գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտման հմտություններ: Կրթական ծրագրի հիմքում ընկած է նաև ճարտարապետական նախագծերում քանդակի կիրառումը:

Գրաֆիկա

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

ԵԳՊԱ-ն Հայաստանում միակ բարձրագույն կրթական հաստատությունն է, որը տրամադրում է գրաֆիկա մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր՝ ուսուցման առկա հիմունքով:

Ծրագրի նպատակն է՝ պատրաստել բարձր որակավորման մասնագետներ հաստոցային գրաֆիկայի, գրքի գրաֆիկական ձևավորման բնագավառում: Ուսանողները սովորում են գծի միջոցով ստանալ ծավալային պատկերներ, ստեղծել գրաֆիկական կոմպոզիցիոն նախագծեր (հաստոցային, գրքի ձևավորման): Քանի որ նյութի վրա աշխատանքը գրաֆիկական արվեստի հիմնական արտահայտչամիջոցն է, հետևաբար ծրագրի շրջանակներում այն հատուկ ուշադրության է արժանանում: Ուսանողները ձեռք են բերում կոմպոզիցիային համապատասխան գրաֆիկական նյութերի ընտրության ու կիրառման հմտություններ:

Ծրագիրը նաև առաջարկում է գրաֆիկայի տեխնիկայի և տեխնոլոգիայի վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ (լիտոգրաֆիա, լինոգրաֆիա, ցինկոգրաֆիա, օֆորտ, գրավյուրայի տարբեր տեսակներ և այլն): Գրաֆիկայի բաժնի ուսանողների պրակտիկան կազմակերպվում է ակադեմիայի լաբորատորիայում, հրատարակչություններում, տպարաններում: Ծրագրով ուսուցանվող գրաֆիկական տեխնիկաների և նյութերի բազմազանությունը լայն հնարավորություններ են ընձեռում ապագա արվեստագետներին՝ արտահայտելու իրենց մտահղացումները:

Կերպարվեստի պատմություն և տեսություն

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

Արվեստի պատմության և տեսության կրթական ծրագիրը արվեստաբան-մասնագետներ է պատրաստում կերպարվեստի պատմության, գեղարվեստական քննադատության, թանգարանային գործունեության, զբոսաշրջության և կերպարվեստի մասնագիտական բարձր որակավորում պահանջող այլ ոլորտների համար: Ուսուցումը կազմակերպվում է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով:

Ծրագիրը նաև առաջարկում է ուսումնասիրել հայ և համաշխարհային արվեստի պատմություն, հայ և արտասահմանյան ճարտարապետության պատմություն, ազգագրություն, հնագիտություն, հայ և համաշխարհային թատրոնի պատմություն, երաժշտության պատմություն, թանգարանային գործ, օտար լեզու և այլն:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացմանը: Գործնականում ծրագիրը առաջարկում է պրակտիկաներ ցուցասրահներում, պատկերասրահներում, թանգարաններում, պետական արխիվներում և հրատարակչություններում:

Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ.

Դիզայն

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

ԵԳՊԱ-ն առաջարկում է դիզայն մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր առկա հիմունքով: Կրթական ծրագրի նպատակն է՝ պատրաստել բարձր որակավորման մասնագետներ դիզայնի ոլորտում, ովքեր կհամապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին: Մասնավորապես ծրագիրը պատրաստում է մասնագետներ արդյունաբերության, արտաքին միջավայրի ձևավորման (էքստերիեր, ինտերիեր), ստեղծագործական-նախագծային, գովազդային և այլ ոլորտների դիզայնի և աշխատանքների համար: Ծրագրում ընդգրկված են հետևյալ առարկաները՝ կոմպոզիցիա, էրգոնոմիկա, արխիտեկտոնիկա, բիոնիկա, գծագրական երկրաչափություն, էքստերիեր-ինտերիեր, նախագծում և այլն:

Մագիստրոսական ծրագիրը ուսանողին հնարավորություն է ընձեռում ուսման ընթացքում խորացնել իր գիտելիքները հետևյալ բնագավառներում՝ դիզայնի պատմություն և փիլիսոփայություն, տեխնոլոգիա, ուրբանիզմ, կանաչապատում, բնապահպանություն, էներգետիկա, կոնսերվացիա, արվեստ, դիզայն և հանրային տիրույթ, ռիսկեր և ճկունություն, անշարժ գույք:

Պրակտիկաները կազմակերպվում են արդյունաբերության տարբեր բնագավառներում և մասնավոր սեկտորում:

Համակարգչային գրաֆիկա

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

ԵԳՊԱ-ն առաջարկում է համակարգչային գեղարվեստական նախագծում մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր առկա ուսուցմամբ, որի նպատակն է պատրաստել բարձր որակավորման մասնագետներ համակարգչային գրաֆիկայի, եռաչափ գրաֆիկայի (3D), WEB կայքերի նախագծման և արդյունաբերական արտադրանքի փաթեթավորման, ֆիրմային ոճերի ձևավորման, համակարգչային գովազդի, էլեկտրոնային բիզնեսի և այլ ոլորտների համար:

Ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնում ուսանողների գեղագիտական ընկալումների, ինչպես նաև մտահղացումները համակարգչային նախագծերի վերածելու ունակությունների զարգացմանը: Ուսանողները սովորում են կոմպոզիցիոն նախագծերում օգտագործել ժամանակակից ավտոմատացված տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Պրակտիկաներն ուսանողներին տալիս են

բավարար հմտություններ արդյունաբերական տարբեր բնագավառների և մասնավոր սեկտորի աշխատանքներում ակտիվորեն ներգրավվելու համար:

Հագուստի մոդելավորում

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցում է կազմակերպվում նաև հագուստի մոդելավորում մասնագիտության գծով, որի նպատակն է պատրաստել մասնագետներ թեթև արդյունաբերական տարբեր ճյուղերի համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսանողներին լուծել հագուստի մոդելավորման բարդ խնդիրներ, ստեղծել նորաձևության ժամանակակից գեղագիտական բարձրաճաշակ մոդելների նախագծեր, նյութի վրա իրականացնել կոմպոզիցիոն մտահղացումներ: Կարևոր նշանակություն է տրվում նաև ազգային տարազի պատմության ուսումնասիրությանը և եվրոպական նորաձևության զարգացման միտումներին: Այս մասնագիտության գծով ուսուցանվող հիմնական առարկաներն են՝ կոմպոզիցիա, աշխատանք նյութի վրա, տեխնոլոգիա, կոնստրուկտավորում, արխիտեկտոնիկա, ազգային տարազի զարդանախշ, եվրոպական հագուստ և այլն:

Գործնական փուլում ծրագիրը առաջարկում է պրակտիկա համապատասխան ձեռնարկություններում, իսկ ձեռք բերված հմտությունները ներկայացվում են հանրությանը՝ ուսանողների կողմից կազմակերպված մոդելավորման աշխատանքների ցուցադրություններով:

Կիրառական արվեստ

4 տարի բակալավրիատ/առկա

2 տարի մագիստրատուրա/առկա

Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսուցման առկա հիմունքով բարձր որակավորման մասնագետներ են պատրաստվում խեցեգործության կոմպոզիցիոն ստեղծագործական, ինչպես նաև նյութի վրա կատարողական աշխատանքների համար: Ուսումնառության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողի մտահղացումները կոմպոզիցիոն լուծումներով արտահայտելու ունակությունների և հմտությունների, քննադատական և վերլուծական մտքի զարգացման վրա: Ուսուցանվում են նաև կիրառական արվեստի (խեցեգործության) տեխնիկաներն ու տեխնոլոգիաները, ուսումնասիրվում են կիրառական արվեստի պատմությունը, խեցեգործության ազգային ակունքներն ու ավանդույթները, ինչպես նաև ժամանակակից համաշխարհային ձեռքբերումները:

Հետազոտողի ծրագիր/Ասպիրանտուրա

ԵԳՊԱ-ն իրականացնում է սպիրանտի հետազոտական ծրագիր, որը համարժեք է PhD-ին և Ազգային որակավորումների շրջանակում զբաղեցնում է 8-րդ մակարդակը: Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ ու դիզայն» մասնագիտությամբ ասպիրանտական ծրագիրն իրականացվում է առկա և հեռակա ձևերով:

Ակադեմիայի **Ֆակուլտետները** գործում են համաձայն ԵԳՊԱ կանոնադրության: Ֆակուլտետը իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ակադեմիայի կողմից ընդունված որոշումներին և ՀՀ օրենսդրությանը: Ֆակուլտետը, իր խնդիրներին և իրականացվող մանկավարժական, գիտական աշխատանքներին համապատասխան, կազմում է հաստիքացուցակ, որը հաստատվում է ակադեմիայի ռեկտորի կողմից: Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական այլ ստորաբաժանումներից:

Ֆակուլտետի խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնակարգը և այն ներկայացնում է ակադեմիայի գիտական խորհրդի հաստատմանը: Ընտրում է ֆակուլտետի դեկանին, լսում դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը: Ֆակուլտետի խորհրդի կազմի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնակարգով: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ֆակուլտետի դեկանն է:

Ֆակուլտետի խորհուրդը՝

Ա. ակադեմիայի գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ, լաբորատորիաներ, բաժիններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու վերաբերյալ առաջարկություններ,

Բ. լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր,

Գ. ակադեմիայի գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները,

Դ. ընտրում է գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին,

Ե. լուծում է ակադեմիայի կանոնադրությունից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նրա նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների համար:

Ֆակուլտետի գործունեությունն իր իրավասությունների սահմաններում և ակադեմիայի կանոնադրության համաձայն կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը:

Ակադեմիայի **ֆակուլտետի դեկանը** ընտրվում է ակադեմիայի գիտական խորհրդի սահմանած կարգով, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով: Դեկանի ընտրությունը հաստատվում է ռեկտորի կողմից, եթե պահպանվել է ընտրության օրինականությունը: Դեկանի պաշտոնում կարող են առաջադրվել առնվազն դոցենտի գիտական կոչում ունեցող և կենսաթոշակային տարիքի չհասած դասախոսները: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

Ակադեմիայի **ամբիոնները** ակադեմիայի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են ակադեմիայի կանոնադրության հիման վրա: Ակադեմիայում գործում է 7 ամբիոն՝ **Գեղանկարի, Գրաֆիկայի և գծանկարի, Քանդակագործության, Կերպարվեստի տեսության և հումանիտար գիտությունների, Կիրառական արվեստի, համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման, Դիզայնի և Միասնական:**

Ամբիոնների գիտամանկավարժական կազմը բաղկացած է պրոֆեսորներից, դոցենտներից, ավագ դասախոսներից, դասախոսներից:

Ամբիոնի վարիչն ընտրվում է ակադեմիայի գիտական խորհրդի կողմից սահմանված կարգով՝ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով և հաստատվում է ռեկտորի կողմից: Ամբիոնի վարիչի պաշտոնում կարող են առաջադրվել գիտության դոկտորներ, պրոֆեսորներ, իսկ բացառության դեպքերում՝ նաև գիտությունների թեկնածուներ և դոցենտներ: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել ամբիոնի վարիչի պաշտոնում:

Ակադեմիայի ամբիոնների (բաժինների, լաբորատորիաների) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը կատարվում է

մրցութային կարգով, պայմանագրային հիմունքներով, ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համաձայն: Ակադեմիայում դասավանդում են մշակույթի գործիչներ՝ ժողովրդական նկարիչներ, արվեստի վաստակավոր գործիչներ, ԳԱԱ թղթակից անդամներ, պրոֆեսորներ և գիտության թեկնածուներ ու դոկտորներ:

ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿԱՌՈՒՑՑ

ԵԳՊԱ-ում գործում է ուսանողական խորհուրդ (ՈւԽ), այն ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է: ՈւԽ-ի լիազորությունները և գործունեության կարգը սահմանում են ԵԳՊԱ-ի և ՈւԽ-ի կանոնադրություններով (հաստատված 05.10.2010 թ. ԵԳՊԱ գիտական խորհրդի կողմից): ՈւԽ-ն ապահովում է ուսանողական ինքնավարությունը և ուսանողական ինքնակառավարման գործընթացներն ակադեմիայի ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության իրավունքներն ու շահերը, նպաստում նրանց հասարակական, ստեղծագործական, մշակութային, գիտական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ: Տե՛ս նաև <http://www.yafa.am/?cat=58> : ՈւԽ ներկայացուցիչներն ընդգրկված են Ակադեմիայի կառավարման և գիտական խորհուրդներում, ինչպես նաև ռեկտորատում:

ԵԳՊԱ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵԳՊԱ ՈԱ համակարգի առաքելությունն է՝ նպաստել Ակադեմիայի գործունեության հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն, ծառայություն հասարակությանը) շահակիցների վստահության ամրապնդմանը և հավաստել, որ Ակադեմիայի ՄԿԾ-երը համապատասխանում են ՈԱՇ-ին, եվրոպական կրթական չափանիշերին, մշտադիտարկվում և շարունակաբար բարելավվում են:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի ապահովման քաղաքականությունը կոչված է աջակցելու Ակադեմիային՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ իրականացնելու համար:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան պարտավորվում է կայացնել արդյունավետ որոշումներ՝ ուղղված Ակադեմիայի գործունեության բարելավմանը, հիմնվելով մշտադիտարկման համակարգի վրա, որն ապահովում է շահակիցների հետ հետադարձ կապը և բոլոր շահակիցների պահանջների նկատմամբ հավասարակշռությունը:

ԵԳՊԱ ՈԱ քաղաքականությունը բաց, ԵԳՊԱ բոլոր աշխատակիցներին, շահակիցներին և հասարակությանը հասանելի հիմնադիր փաստաթուղթ է: Ակադեմիան պատասխանատու է սույն փաստաթուղթը տեղեկատվական հնարավոր միջոցներով հասանելի և հասկանալի դարձնել իր բոլոր շահակիցներին՝ նրանց ՈԱ գործընթացներում ներգրավելու համար:

Սույն քաղաքականությունը համարվում է Ակադեմիայի առաքելության իրականացման համար որդեգրած ռազմավարության և քաղաքականության անբաժան մասը:

Արտաքին և ներքին գործոնների անընդհատ փոփոխման պայմաններում Ակադեմիայի ՈԱ քաղաքականության արդյունավետությունը յուրաքանչյուր տարի մշտադիտարկվում է և, անհրաժեշտության դեպքում՝ վերանայվում:

ՈԱ քաղաքականության դրույթներին համաձայն Ակադեմիան, պահպանելով ֆունդամենտալ դասական կրթության իր բազմամյա ավանդույթները, ցուցաբերում է ճկունություն՝ համաշխարհային կրթական միջավայրում ինտեգրվելու, բոլոր շահակիցների պահանջներն առավելագույնս ապահովելու համար: Այս ամենը պայմանավորում են Ակադեմիայի բարօրությունը և Ակադեմիայի աշխատակիցների բարեկեցությունը:

ԵԳՊԱ ՈԱ ոլորտներն են՝

- Մասնագիտական կրթական ծրագրեր,
- Ուսանողի գնահատում,
- Ընդունելություն
- Պրոֆեսորադասախոսական կազմ,
- Ուսումնական ռեսուրսներ և ծառայություն ուսանողներին,
- Վարչարարություն,
- Միջազգայնացում,
- Հետազոտություն և զարգացում,
- Ծառայություն հասարակությանը

ԵԳՊԱ ՈԱ քաղաքականության նպատակն է սատարել ԵԳՊԱ-ին՝ իր առաքելության ի կատար ածմանը և ապահովել ԵԳՊԱ բարձր մրցունակությունը կրթության և գիտության բնագավառում, որի համար պետք է իրականացնել հետևյալ խնդիրները՝

1. Նպաստել ակադեմիայի առաքելությունն իրականացնող գործընթացների շարունակական բարելավմանը՝ մշակելով և ներդնելով ՈԱ գործիքներ ու մեխանիզմներ:
2. Ապահովել ՄԿԾ-երի վերջնարդյունքների համապատասխանությանը նմանատիպ կրթական ծրագրերի հետ և ՄԿԾ-երի հաջող իրականացման համար համապատասխան ուսումնական միջավայրի ստեղծում:
3. Նպաստել պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ու մասնագիտական աճի ապահովմանը:
4. Ապահովել հավաստիություն և փաստաթղթային հիմքեր արտաքին գնահատման համար (ինստիտուցիոնալ և ծրագրային հավաստարմագրում):

ԵԳՊԱ որակի ապահովման կառույցը

ԵԳՊԱ ՈԱ կենտրոն (կառուցվածքն ու գործառույթները)

ԵԳՊԱ ՈԱ գործընթացներն իրականացնելու համար ԵԳՊԱ-ում 2011 թ.-ից ի վեր գործում է ՈԱ կենտրոնը:

ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը ակադեմիայի կառուցվածքային **անկախ** ստորաբաժանում է, որը ենթարկվում է ուղղակիորեն ռեկտորին: Կենտրոնի անկախությունը երաշխավորում է ինքնագնահատման անաչառությունը:

Կենտրոնի աշխատանքները կարգավորվում են ակադեմիայի ռեկտորի կողմից հաստատված ՈԱ կենտրոնի կանոնակարգի դրույթներով:

ՈԱ կենտրոնում առայժմ աշխատում են 2 հրամանագրված աշխատակից՝ կենտրոնի տնօրենը և ՈԱ կենտրոնի ավագ մասնագետը (լրիվ հաստիքով):

ՈԱ կենտրոնն ունի կահավորված և սարքավորումներով հագեցած գրասենյակ և աշխատաժողովների դահլիճ:

ՈԱ կենտրոնը մշակում և ներդնում է ՈԱ գործիքներ ու մեխանիզմներ, սատարում է ակադեմիայի ներքին որակի ապահովման գործընթացներին:

ՈԱ կենտրոնի գործառույթներն են.

- Համակարգել ՈԱ ներքին գործընթացները,
- Մեկնաբանել որակի ապահովման արտաքին պահանջները և հասու դարձնել բոլոր շահակիցների և ՈԱ գործընթացներին մասնակցող կազմի համար,
- Իրականացնել ամենամյա ինքնագնահատման հաշվետվության պատրաստման ինստիտուցիոնալ և ծրագրային գործընթացները,
- Վերապատրաստել անձնակազմը որակի ապահովման մոտեցումների շուրջ,
- Բարձրացնել շահակիցների տեղեկացվածությունը ակադեմիայում իրականացվող գործընթացների վերաբերյալ ,
- Կազմակերպել և լուսաբանել որակի ապահովման արտաքին գործընթացների հետ կապված հարցերը,
- Մշակել մշտադիտարկման մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի իրականացնել բարելավում՝ ՊԻՄԲ սկզբունքով,
- Նպաստել Ակադեմիայի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը,
- Մշտադիտարկման ենթարկել ամբիոնների կողմից կրթական ծրագրերի վերանայման գործընթացը՝ կրթական ծրագրերը եվրոպական կրթական չափանիշերին համապատասխանեցնելու համար,
- Մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել՝

1. Դասավանդման մեթոդաբանությունը,
2. Ուսանողների գնահատման համակարգը,
3. Ակադեմիայում առկա ռեսուրսները և Ակադեմիայի կողմից տրամադրվող ծառայությունները,
4. Պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքը,
5. Ընդունելության կարգը,
6. Դիմորդների տեղեկացվածությունը,
7. Ակադեմիայի շրջանավարտներից գործատուների գոհունակության աստիճանը,
8. ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

ՈԱ կենտրոնը ուղղորդում է ինքնավերլուծությունն իրականացնող ենթահանձնաժողովներին, սատարում է հարցաշարերի կազմման և արդյունքների վերլուծության գործում, կազմում ինքնավերլուծության տարեկան հաշվետվությունը, իսկ հինգ կամ վեց տարին մեկ /կախված ինքնավերլուծության տեսակից/ կազմում է արտաքին գնահատման համար ամենակարևոր փաստաթուղթը՝ ինքնավերլուծության զեկույցը:

Ինքնավերլուծությունը՝ որպես ՈԱ գործիք

2011 թվականից ի վեր Ակադեմիայում մշակվում և ներդրվում են ՈԱ գործիքներ և մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս գնահատել ներքին գործընթացները: Շահակիցների շրջանում պարբերաբար անց են կացվում ֆոկուս խմբեր և կատարվում են հարցումներ ԵԳՊԱ ՄԿԾ-երի, ռեսուրսների, աշխատակիցների աշխատանքի, վարչարարության և այլ ոլորտների արդյունավետությունը գնահատելու համար:

Այս վերլուծությունների հանրագումարում Ակադեմիայի ՈԱ կենտրոնը կատարում է տարեկան խորքային ենթակառուցվածքային ինքնավերլուծություն՝ համաձայն ՈԱԱԿ-ի կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված **Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչների և չափանիշերի:**

Պարբերաբար իրականացվող ինքնավերլուծությունը Ակադեմիային հնարավորություն է տալիս վերանայել պլանավորված գործողությունները, արդյունքների հիման վրա հայտնաբերել խնդիրները և բարելավման ենթակա

ուղորտները, ինչպես նաև Ակադեմիայի դրական և ուժեղ կողմերն ու հնարավարությունները:

Յուրաքանչյուր 5-րդ տարում Ակադեմիան ամփոփում է ինքնավերլուծության արդյունքները ինքնավերլուծության զեկույցի մեջ:

Ինքնավերլուծությունը թույլ է տալիս գնահատել Ակադեմիայի առաքելության, նպատակների, ռազմավարության, իրականացվող գործընթացների և արդյունքների համապատասխանությունը:

Ինքնավերլուծության գործընթացի նկարագրություն

Որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով ակադեմիան տրամադրում է մարդկային ռեսուրսներ: ԵԳՊԱ-ում գործում են ՈԱ ենթահանձնաժողովներ համաձայն ՈԱԱԿ-ի կողմից սահմանված և ՀՀ կառավարության կողմից հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման համար նախատեսված 10 չափանիշերի:

Ենթահանձնաժողովներում ընդգրկված են ներքին փորձագետներ: Հանձնաժողովների կազմը ներկայացվում է ՈԱ կենտրոնի կողմից և քննարկվում ու հաստատվում է ռեկտորատի նիստում: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված է մեկ ուսանող: Մյուս անդամները՝ դասախոսներ են և/կամ վարչական աշխատողներ:

Ենթահանձնաժողովները պարբերաբար (կախված ակադեմիայի գործունեության գնահատվող շրջանակից) ինքնավերլուծության համար տվյալներ են հավաքում, վերլուծում և կազմում տվյալ չափանիշի ինքնավերլուծության զեկույցը: Ենթահանձնաժողովների աշխատանքը **համակարգվում է ՈԱ կենտրոնի կողմից:**

Ինքնավերլուծության զեկույցը պատրաստվում է երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն, պարունակում է հղումներ Ակադեմիայի հիմնադիր փաստաթղթերին, կարգերին և այլ փաստաթղթերի:

Ինքնավերլուծության զեկույցը հիմք է հանդիսանում արտաքին գնահատման համար:

ԵԳՊԱ ՈԱ արտաքին գործընթացները

Ինքնավերլուծության զեկույցի ավարտից հետո պետական հավատարմագրման համար դիմում-հայտ է ներկայացվում ՈԱԱԿ՝ համաձայն Հավատարմագրման կարգի (մանրամասն նկարագրությունը տե՛ս http://www.anqa.am/am/Portals/0/Full_arm%20finally%202.pdf): Կարգում ներկայացվող պահանջներին համապատասխանելու դեպքում ՈԱԱԿ-ը ընդունում է դիմում-հայտը, Ակադեմիայի և ՈԱԱԿ-ի միջև կնքվում է պայմանագիր և սկսվում է հավատարմագրման գործընթացը:

Հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 փուլով՝

1. Ինստիտուցիոնալ կարողությունների կամ ՄԿԾ-երի ներքին գնահատում (ինքնավերլուծություն),
2. Արտաքին գնահատում անկախ փորձագիտական խմբի կողմից (փորձաքննություն),
3. Հավատարմագրման շնորհման կամ մերժման վերաբերյալ որոշման կայացում ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից:

ՈԱ կենտրոնը արտաքին գնահատման գործընթացի համար արտաքին գնահատողներին է տրամադրում Ինքնավերլուծության զեկույցը և անհրաժեշտ հավաստի այլ հիմքեր:

Կազմվում է ժամանակացույց, որի համաձայն տեղի են ունենում փորձագիտական այցերը և հանդիպումները շահակիցների հետ: Հանդիպումների մասնակիցների ցանկն ապահովում է Ակադեմիան: Այցին նախորդող ժամանակամիջոցում Ակադեմիան նախապատրաստում է աշխատակազմին, ուսանողներին և այլն:

ԵԳՊԱ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովումը

ՄԿԾ-երի մշտադիտարկում, վերանայում, նոր ծրագրերի կազմում

Մասնագիտական կրթական ծրագրերի (4 տարին մեկ՝ բակալավրի և 2 տարին մեկ՝ մագիստրոսի կրթական ծրագրերի համար) մշտադիտարկումը և պարբերական բարելավումը նպաստում են կրթության որակի բարձրացմանը:

ԵԳՊԱ բոլոր ՄԿԾ-երի համար սահմանվում են և հրապարակվում հստակ չափելի և համեմատելի ուսումնառության վերջնարդյունքներ, որոնք համահունչ են ՈԱՇ-ին: Դասավանդումը և ուսանողների գիտելիքի գնահատումը հիմնվում են ուսումնառության վերջնարդյունքների վրա:

Նոր ՄԿԾ կազմման համար հիմք կհանդիսանա ԵԳՊԱ ինքնավերլուծությունը և աշխատաշուկայի ուսումնասիրությունը: Աշխատաշուկայում նոր մասնագիտության անհրաժեշտության բացահայտման դեպքում ԵԳՊԱ-նում ամբիոնների առաջատար դասախոսներից կազմվում է հանձնաժողով, որը միջազգային առաջատար ՄՈՒՀ-երի ՄԿԾ-երի խոր ուսումնասիրություն է ձեռնարկում, կատարվում է բենչմարքինգ, սահմանվում են նոր ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները, դրանք ձևավորող դասընթացների ցանկը, դասընթացների նկարագրությունը և ամբողջական փաթեթը ներկայացվում թողարկող ամբիոնին՝ քննարկման և հաստատման համար: Թողարկող ամբիոնի հավանության դեպքում փաթեթը քննարկվում և հաստատվում է ԵԳՊԱ գիտական խորհրդի նիստում և այն ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ ստանալու նոր մասնագիտական կրթական ծրագրի լիցենզավորումն ու իրականացնելու թույլտվությունը: ՄԿԾ-երի մշակման և վերանայման մանրամասն նկարագրությունը տե՛ս՝ Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկում **Հավելված 1:**

Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման համար ԵԳՊԱ-ն կարևորում է հետևյալ գործոնները՝ ուսանողների առաջընթացի ու նվաճումների դիտարկումները, ուսանողների, շրջանավարտների և գործատուների արձագանքները, բենչմարքինգը:

1. Շահակիցների արձագանքի ստացման մեթոդներն են՝
 - Յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ կատարվում է հարցում շրջանավարտների շրջանում: Հարցման արդյունքում գնահատվում է ՄԿԾ-երի արդյունավետությունը՝ շրջանավարտների

բավարավածությունը ԵԳՊԱ-ում ստացած ՄԿԾ-ից, ԵԳՊԱ-ում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների և կարողությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, հայտնաբերվում են ՄԿԾ-ի ուսումնական վերջնարդյունքների թերություններն ու բացթողումները: «ԵԳՊԱ շրջանավարտների բավարարվածության գնահատում» գործիքը և դրա նկարագիրը տե՛ս **Հավելված 2**:

- Յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ կատարվում է հարցում գործատուների շրջանում: Հարցման նպատակն է՝ պարզել, թե որքանով է ԵԳՊԱ շրջանավարտի գիտելիքը, հմտություններն ու կարողությունները բավարարում գործատուի պահանջները, ի՞նչ լրացուցիչ հմտություններ կարելի է տալ շրջանավարտին ՄԿԾ-ի շրջանակներում: Հարցման համար կիրառվող «ԵԳՊԱ Մասնագիտական Կրթական Ծրագրերի արդյունավետության գնահատում գործատուների կողմից» գործիքը և դրա նկարագիրը տե՛ս սույն ուղեցույցի **Հավելված 3**:
 - ՄԿԾ-երի վերանայման համար կարևոր գործոն է ուսումնառողի կարծիքը դասավանդվող դասընթացների, դրանց դասավանդման մեթոդների և ուսումնառության վերջնարդյունքների առումով: Մշակված է ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները ձևավորող հիմնական դասընթացների արդյունավետությունը գնահատող հարցաթերթ, որի կիրառման շնորհիվ պատկերացում է կազմվում ՄԿԾ-ի դասընթացների արդյունավետության մասին (մանրամասները՝ տե՛ս «Դասընթացի արդյունավետության գնահատում» գործիքի նկարագիրը սույն ուղեցույցի **Հավելված 4**):
2. Բացի այս հարցումների արդյունքներից ՄԿԾ-երի վերանայման գործիք է հանդիսանում բենչմարքինգը, որի ընթացքում համեմատական վերլուծություն է կատարվում աշխարհի առաջավոր ՄՈՒՀ-երի համապատասխան ՄԿԾ-երի հետ (համեմատվում են ուսումնառության վերջնարդյունքները, դասընթացների ցանկն ու կրեդիտները, ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և այլն): ԵԳՊԱ-ն հրատարակել է «ԵԳՊԱ ՄԿԾ-երի վերանայման ուղեցույց» **Հավելված 1**, որտեղ հստակ ներկայացված են ՄԿԾ-երի բենչմարքինգի գործընթացը:

Ամբիոններում քննարկումներից հետո պրոֆեսորադասախոսական կազմից ընտրվում են ՄԿԾ-երը վերանայող խմբի անդամներ, ովքեր, հաշվի առնելով

վերը նշված կետերը, իրականացնում են ՄԿԾ-ի վերանայումը, որից հետո դնում քննարկման ամբիոնի, այնուհետև գիտական խորհրդի նիստերում:

Ուսումնառության և դասավանդման գործընթացը

Ակադեմիայի ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակից բաղկացած ուսումնական տարով, և յուրաքանչյուր կիսամյակ ավարտվում է քննաշրջանով: ԵԳՊԱ դասավանդման մեթոդներն ապահովում են ուսանողակենտրոն ուսուցում՝ ինտերակտիվ դասախոսություններ, գործնական/սեմինար, լաբորատոր, արվեստանոցային պարապմունքներ, արտադրական պրակտիկաներ: Պարապմունքներն անց են կացվում ՄԿԾ-երին բնորոշ հագեցվածությամբ արվեստանոցներում, լաբորատորիաներում, արհեստանոցներում և լսարաններում:

Ուսանողի գնահատում

Ուսանողի առաջադիմության գնահատումը բարձրագույն կրթական համակարգի կարևորագույն տարրերից է: Այն ԵԳՊԱ-ի գեղեցիկ ավանդույթներից է՝ երկար տարիներ գնահատումը կատարվել է ամբիոնի ողջ կազմի, ոչ թե միայն դասավանդող դասախոսի կողմից, ինչն ապահովել է գնահատման անաչառությունն ու թափանցիկությունը:

Այժմ ուսանողի առաջադիմության գնահատումը կատարվում է համաձայն 2013 թ. մշակված «Ուսանողի գնահատման հայեցակարգային դրույթներ» (Հավելված 5) փաստաթղթի, որը ենթադրում է արդար և թափանցիկ գնահատում:

Յուրաքանչյուր դասընթացի սկզբին ուսանողին հստակ ներկայացվում են ուսումնառության վերջնարդյունքները և, դրանց համապատասխան, գնահատման չափանիշերը: Գնահատման մասին դասավանդողների և ուսումնառողների հետադարձ կապի արդյունքում հնարավոր են դառնում բարելավումները դասավանդման և գնահատման գործընթացներում:

Ուսանողի առաջադիմության գնահատման գործընթացի արդյունավետությունը ստուգվում է ուսանողների և դասախոսների շրջանում կատարվող հարցման միջոցով («Ուսանողի գնահատման համակարգի արդյունավետության գնահատում» գործիքը և դրա նկարագիրը տե՛ս Հավելված 6):

Ամփոփիչ գնահատականը բաղադրված է 2 բաղադրիչի, և յուրաքանչյուր դասընթացի համար բաղադրիչներին վերագրված է կշիռ: Այն սահմանվում է դասընթացի առանձնահատկությունները հաշվի առնելով: Բաղադրիչները գնահատվում են 10 բալանոց սանդղակով: Հանրագումարում ձևավորվում է տվյալ դասընթացից ստացված գիտելիքի վերջնական գնահատականը:

Ուսանողի գիտելիքի գնահատումը կատարվում է կիսամյակի ընթացքում ընթացիկ դիտումների/քննությունների և կիսամյակի ավարտին՝ ամփոփիչ քննության կամ դիֆերենցված ստուգարքի ձևով:

Ընթացիկ դիտումների ժամանակ նիշային գնահատական չի դրվում, դասախոսը կամ ամբիոնը արձագանքում են ուսանողի կատարած աշխատանքների վերաբերյալ, որից հետո ուսանողը կատարելագործում է իր աշխատանքները: Գնահատման այս մեթոդը նպաստում է ուսանողի գիտելիքի ձևավորմանը:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին 1 կուրսեցի ուսանողներին տրամադրվում է «Ուսանողի ձեռնարկ», որտեղից նրանք մանրամասն տեղեկանում են գնահատման համակարգին:

«Ուսանողի գնահատման հայեցակարգային դրույթներ» փաստաթղթում հստակ նշված են գնահատականի բողոքարկման կարգն ու գրագողության դեմ պայքարի ձևերը:

Աջակցություն ուսանողներին

Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար ԵԳՊԱ-ն ուսանողներին ապահովում է համապատասխան ռեսուրսներով և ծառայություններով:

Լսարանները, արվեստանոցներն ու լաբորատորիաները հազեցած են համապատասխան սարքավորումներով և գույքով, որոնք, հնարավորության սահմաններում, պարբերաբար թարմեցվում են:

Մասնաշենքերում համակարգչային լսարանների առկայությունն ակադեմիայի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար ապահովում է ինտերնետ հասանելիություն:

ԵԳՊԱ-ն ունի գրադարան, ընթերցասրահ, որտեղ հաճախ կազմակերպվում են սեմինարներ, գիտական հետազոտությունների շնորհանդեսներ և արվեստի վերաբերյալ կինոդիտումներ: Ակադեմիան պարբերաբար համալրում է

գրադարանի նյութերը մասնագիտական կրթական ծրագրերի համար անհրաժեշտ գրականությամբ: Գրադարանը հասանելի է ուսանողների և ողջ պրոֆեսորադասախոսական կազմի համար:

Ակադեմիայի մասնաշենքերը ջեռուցվում են: Պահպանվում են առողջապահական և անվտանգության նորմերը:

Վարչական աշխատակազմը ողջ օրվա ընթացքում խորհրդատվական աջակցություն է ցուցաբերում ուսանողներին՝ իրենց մտահոգող հարցերի շուրջը:

Մասնագիտական խորհրդատվության համար ֆիքսված ժամանակացույց չկա, քանի որ դասավանդման առանձնահատկություններից ելնելով ուսանողն անմիջական աշխատանքային համագործակցության մեջ է դասավանդողների հետ, ստանում է ամենօրյա խորհրդատվություն:

2013 թ. ԵԳՊԱ-ում ստեղծվեց Մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման կենտրոնը (այսուհետ՝ ՄԿՏԿ), որը մեծապես աջակցում է դիմորդներին, ուսանողներին և շրջանավարտներին աշխատանքային հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման, անձնական պորտֆոլիո ստեղծելու և, որպես մասնագետ, գործատուին ավելի պրոֆեսիոնալ կերպով ներկայանալու առումներով:

Ուսանողների համար նշանակալից աջակցություն է նաև ԵԳՊԱ «Տարեգիրք» հետազոտական աշխատանքների հավաքածուում անվճար տպագրվելու հնարավորությունը:

Ակադեմիայում գործում է «Ալբերտ և Թովե Բոյաջեան» ցուցասրահը, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին հանդես գալ անհատական ցուցադրություններով կամ մասնակցել խմբակային թեմատիկ ցուցադրություններին:

ԵԳՊԱ-ի Արտաքին կապերի բաժինը համագործակցում է համաշխարհային արվեստի մի շարք առաջատար ԲՈՒՀ-երի հետ, որը հնարավորություն է տալիս Ակադեմիայի ուսանողներին փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսումնառել արտասահմանյան ուսումնական հաստատություններում:

ԵԳՊԱ-ում ուսումնական ռեսուրսները և ուսանողներին աջակցության ծառայությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում, ենթարկվում են մշտադիտարկման (հարցումներ շահակիցների շրջանում, **Հավելված 7**) և պարբերական վերանայման՝ ապահովելու ՄԿԾ-երի արդյունավետությունը և ԵԳՊԱ-ի մրցունակությունը հանրապետական, ռեգիոնալ և համաշխարհային կրթական համակարգում:

Առաջին կուրսեցիներին տրամադրված վերը նշված «Ուսանողի ձեռնարկ»-ը, ուսանողին հասանելի է դարձնում ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի, գնահատման համակարգի, հասանելի ռեսուրսների, վարձավճարների և այլնի մասին կարևոր տեղեկություններին:

Ակադեմիայում գործում է նաև ուսման վարձավճարների զեղչերի հստակ սահմանված համակարգ:

ՈԱ գործընթացները վարչարարության ոլորտում

Կառավարումը՝ «լիազորությունների ֆորմալ և ոչ ֆորմալ իրականացումն է»՝ ըստ օրենքի, քաղաքականության և կանոնների, որոնցով սահմանվում են զանազան դերակատարների իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ նրանց միջև փոխազդեցության կանոնները, որոնք օգնում են հասնելու բուհի կրթական նպատակներին¹:

Վարչարարությունը, մյուս կողմից, վերաբերում է «բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից հետապնդվող մի շարք նպատակների՝ ըստ սահմանված կարգի, իրականացմանը»²:

ԵԳՊԱ գործունեության մեջ կարևոր նշանակություն է տրվում կառավարմանն ու վարչարարությանը, որոնց համակարգումը նպատակաուղղված է գործընթացների ներդաշնակության ապահովմանը:

Վարչական բոլոր ստորաբաժանումներն ունեն հստակ սահմանված աշխատանքային կանոնակարգեր: Ստորաբաժանումների գործունեությունը հիմնված է միմյանց հետ սերտ համագործակցության վրա:

Ակադեմիայում վարչարարությունն անց է կացվում որակի կառավարման հիմնական սկզբունքի համաձայն՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում:

Ստորաբաժանումներն աշխատում են համաձայն գործողությունների երկարաժամկետ /ՌԾ/ և կարճաժամկետ /տարեկան պլան/ պլանների համաձայն: Աշխատանքների ստուգումն իրականացվում է հաշվետվությունների շնորհիվ և գնահատվում սահմանված ցուցիչներով: Ստորաբաժանումների աշխատակիցների աշխատանքի գնահատումն իրականացվում է ՈԱ կենտրոնի կողմից մշակված

¹ Fried, Jochen, 2006, “Higher education governance in Europe: autonomy, ownership and accountability – a review of the literature”, in Kohler, J. & Huber, J. eds., 2006, Higher Education Governance between Democratic Culture, Academic Aspirations and Market Forces, Council of Europe. Eurydice - the information network on education in Europe - also refers to this definition in Eurydice, 2008, Higher Education Governance in Europe: Policies, Structures, Funding and Academic Staff, European Commission.

² Eurydice, 2008, Higher Education Governance in Europe: Policies, Structures, Funding and Academic Staff, European Commission

ձևաչափով /Հավելված. . . /: Վերջինիս և հաշվետվությունների հանրագումարում գնահատվում է վարչարարության արդյունավետությունը, բացահայտվում են թույլ կողմերն և համապատասխան բարելավման միջոցառումներ են կազմակերպվում:

Հասկանալի է դասախոսների և ուսանողների ազդեցությունը Ակադեմիայի վարչարարության ոլորտում: ԵԳՊԱ կանոնադրությունը հստակ սահմանում է նրանց մասնակցությունը որոշում կայացնելու գործընթացին:

Կառավարման և վարչարարության գործընթացներն ավելի արդյունավետ դարձնելու համար պարբերաբար մշակվում և վերանայվում են անհրաժեշտ կանոնակարգեր:

Ընդունելություն

ԵԳՊԱ-ն ընդունելություն է կատարում «Գեղանկարչություն», «Քանդակագործություն», «Գրաֆիկա», «Դիզայն», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հագուստի մոդելավորում», «Կիրառական արվեստ», «Կերպարվեստի պատմություն և տեսություն», բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով և «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» ասպիրանտուրայի կրթական ծրագրով:

Ակադեմիայում դիմորդների ընդունելությունը կատարվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: ԵԳՊԱ ընդունելության կարգը հանգամանորեն ներկայացված է ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքում՝ <https://yafa.am>, ինչպես նաև «Ուսանողի ձեռնարկ»-ում:

ԵԳՊԱ ընդունելության քննությունները կազմակերպվում են ԵԳՊԱ-ում: Ընդունելության քննությունների գնահատումն իրականացվում է արդար և թափանցիկ՝ համաձայն ընդունված կարգերի և գնահատման չափանիշերի: ԵԳՊԱ ընդունելության պահանջները յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ներկայացված են ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքում:

Փաստաթղթերի ընդունման ժամանակ դիմորդներին տրվում են հարցաթերթեր (**Հավելված 8**, որտեղ նրանք իրենց արձագանքն են թողնում ԵԳՊԱ-ում առկա ՄԿԾ-երի և, ընդհանրապես ԵԳՊԱ-ի գործունեության մասին իրենց ստացած տեղեկության, ԵԳՊԱ տեղեկատվական աղբյուրների արդյունավետության մասին:

Ընդունելության գործընթացի արդյունավետությունը նույնպես գնահատվում է հարցման միջոցով (հարցաթերթը և դրա նկարագիրը տե՛ս՝ **Հավելված 9**): Հարցումն անց է կացվում 1 կուրսեցիների շրջանում: Նրանց հնարավորություն է տրվում թողնել իրենց արձագանքները ընդունելության ողջ գործընթացի

վերաբերյալ՝ փաստաթղթերի ընդունում, խորհրդատվություն, քննությունների կազմակերպում, քննասենյակների պայմաններ, քննական աշխատանքների գնահատում և այլ:

Գործընթացի գնահատման արդյունքում բացահայտվում են բաց թողումները և կատարվում են համապատասխան միջոցառումներ՝ դրանք շտկելու համար:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման գործընթացը

Լինելով արվեստի ԲՈՒՀ ԵԳՊԱ-ն տարիներ շարունակ ունեցել է իր ավանդույթները դասախոս-արվեստագետների մասնագիտական աճի կազմակերպման առումով: Ակադեմիան սերտ կապի մեջ է եղել հարևան հանրապետությունների, ինչպես նաև սոցիալիստական մյուս հանրապետությունների մշակութային օջախների հետ և հնարավորություն է ունեցել վերապատրաստելու իր կադրերը հանրապետությունից դուրս:

ԵԳՊԱ դասախոս-արվեստագետները մասնակցել են արտասահմանյան տարբեր երկրներում կազմակերպված ցուցահանդեսներին և սիմպոզիումներին: Այս ամենը մեծապես նպաստում էր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճին:

Այժմ, սակայն, պատկերն այլ է:

Դասախոսների մասնագիտական աճն ապահովելու համար հարկավոր է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- ԵԳՊԱ առաքելություն,
- Բյուջեի սղություն,
- Ժամանակի հրամայական,
- Հավատարմագրման պահանջներ:

Բյուջեի սղության պայմաններում դասախոսների մասնագիտական աճին Ակադեմիան նպաստում է սեփական հնարավորություններով:

Նախատեսվում է ԵԳՊԱ-ի ուժերով կազմակերպել հետևյալ վերապատրաստման դասընթացները՝

1. **Օտար լեզու՝ 3 փուլով,**
2. **Համակարգչից օգտվելու հմտություններ՝ 2 փուլով:**

1. Օտար լեզու

Օտար լեզվի դասընթացները կազմակերպվում են տարրական հաղորդակցման հմտություններ և մասնագիտական բնագրերից օգտվելու կարողություններ ապահովելու համար: Այն իրականանում է 3 փուլով:

Վերապատրաստվողների կազմը յուրաքանչյուր փուլի համար որոշվում է դիագնոստիկ թեստավորման արդյունքների հիման վրա:

Գործընթացի պատասխանատուն է՝ Կերպարվեստի տեսության և հումանիտար գիտությունների ամբիոնը:

2. Համակարգչից օգտվելու հմտություններ

Ժամանակի պահանջներից ելնելով դասախոսական կազմին պետք է ծանոթացնել տեղեկատվական տեխնոլոգիաներին, հնարավորություն տալ համակարգչից օգտվելու տարրական հմտություններ ձեռք բերելու:

Այս գործընթացը կազմակերպվում է Համակարգչային գեղարվեստական նախագծման և կիրառական արվեստի ամբիոնի աշխատակիցների ջանքերով:

Վերապատրաստման առաջին փուլը ներառում է Microsoft Office փաթեթի ծրագրերը: Այս փուլը պարտադիր է բոլորի համար: Ովքեր արդեն տիրապետում են այս հմտություններին, պարզապես հանձնում են թեսթը և ստանում համապատասխան միավորներ:

Վերապատրաստման երկրորդ փուլը պարտադիր չէ, այն նախատեսվում է գրաֆիկական ծրագրերի ուսուցման համար: Այս փուլին մասնակցում են միայն ցանկացողները:

Պարբերաբար անց են կացվում սեմինարներ «Մասնագիտական պորտֆոլիոյի ստեղծում», «ԵԳՊԱ Որակի ապահովման գործընթացներ», «Որակի ապահովման գործիքներ և մեխանիզմներ», «Ուսումնական վերջնարդյունքների սահմանում», «Դասավանդման մեթոդաբանություն», «Գնահատման համակարգ և մեթոդներ», «Ուսումնական վերջնարդյունքների սահմանում» թեմաներով:

Յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ ԵԳՊԱ ողջ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է ՈԱ կենտրոնի կողմից մշակված և փորձարկված «ԵԳՊԱ աշխատակցի

աշխատանքի արդյունավետության գնահատում» գործիքով (տե՛ս՝ **Հավելված 10**): Բացի գնահատման այս գործիքից պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենտությունը գնահատվում է նաև դիտումների ժամանակ կոլեգաների արձագանքներով (peer review): ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատականի ամփոփման ժամանակ հաշվի է առնվում նաև «Դասընթացի արդյունավետության գնահատում» հարցման արդյունքները (գործիքը և նկարագիրը տե՛ս՝ **Հավելված 4**):

Մասնագիտական աճին նպաստող այլ մեխանիզմներ

Արվեստի ոլորտում անհատական ցուցահանդեսի կազմակերպում կամ մասնակցություն յուրաքանչյուր ցուցահանդեսի նպաստում է արվեստագետի մասնագիտական աճին: Ակադեմիան ունի պատկերասրահ, որը հատկացվում է դասախոսներին՝ անհատական կամ խմբակային ցուցադրություններ կազմակերպելու համար: Ակադեմիան աջակցում է դասախոսներին միջբուհական ցուցահանդեսներին մասնակցելու համար:

Ինչ վերաբերում է միջազգային ցուցահանդեսներին, բիենալներին և այլ միջոցառումներին, ապա դասախոսներն իրենց մասնակցությունն ապահովում են սեփական միջոցներով:

ԵԳՊԱ-ն հրապարակում է ամենամյա «Տարեգիրք», որտեղ ԵԳՊԱ դասախոսներին հնարավորություն է ընձեռնվում անվճար տպագրել իրենց գիտահետազոտական աշխատանքները: Այս ժողովածուն նույնպես մեծ ներդրում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի առումով:

ԵԳՊԱ հաշվետվողականության կարգ

ԵԳՊԱ-ն մշակում և իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Համաձայն 5 տարվա համար սահմանված ռազմավարական պլանի կազմվում է գործողությունների տարեկան պլան բոլոր ստորաբաժանումների համար, որն ապահովում է դրանց համահունչ աշխատանքը: Ստորաբաժանումները ներկայացնում են եռամսյակային և տարեկան հաշվետվություններ: Հաշվետվություններն ի մի են բերվում, և յուրաքանչյուր տարվա ավարտին

ԵԳՊԱ ռեկտորը տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԵԳՊԱ կառավարման խորհրդին: ԵԳՊԱ ռեկտորի տարեվերջյան հաշվետվությունը տեղադրվում է Ակադեմիայի պաշտոնական կայքում և հասանելի է բոլոր շահակիցներին:

Վարչարարության գործընթացը մշտադիտարկվում է վարչական ստորաբաժանումների հաշվետվությունների և «Վարչարարության արդյունավետության գնահատում» (**Հավելված 11**) հարցման միջոցով:

Շահակիցների ներգրավումը ԵԳՊԱ-ի ՈԱ գործընթացներում

Ինչպես արդեն նշվեց նախորդ բաժիններում, Ակադեմիայի որոշում կայացնելու գործընթացին մասնակցում են ԵԳՊԱ ուսանողական ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները՝ ԵԳՊԱ կանոնադրությունում սահմանված կարգով: Բացի այս, շահակիցների ազդեցությունը ԵԳՊԱ գործունեության վրա կատարվում է հարցումներին և քննարկումներին նրանց մասնակցության ձևով:

Մասնավորապես ՄԿԾ-երի վերանայման գործընթացում կարևորվում է շրջանավարտների և գործատուների կարծիքը, ռեսուրսների գնահատման գործընթացում՝ ուսանողների և դասավանդողների կարծիքը, դիմորդների ընդունելության գնահատման գործընթացում՝ դիմորդների և նրանց ծնողների կարծիքը և այլն:

ՄԿՏԿ կենտրոնի գործունեության արդյունքում կապը շրջանավարտների և գործատուների հետ ավելի սերտ է, որի արդյունքում աշխատաշուկայի զարգացումների մասին ԵԳՊԱ-ն ավելի տեղեկացված է և ավելի ճկուն քաղաքականություն կվարի՝ շուկայի համար անհրաժեշտ մասնագետների թողարկման գործում:

Շահակիցների խմբերի ներկայացուցիչները մասնակցում են ԵԳՊԱ ինքնավերլուծության գործընթացին (տե՛ս՝ սույն ձեռնարկի «Ինքնավերլուծության գործընթացի նկարագրություն» կետը):

Տեղեկատվության տարածում

ԵԳՊԱ գործընթացների մասին տեղեկատվությունը հասանելի է Ակադեմիայի բոլոր շահակիցներին: ԵԳՊԱ գործընթացների և կայացված որոշումների մասին աշխատակիցներին տեղեկացնելը ստորաբաժանումների ղեկավարների պարտականություններից է: Տեղեկատվության տարածման տարրերից են տարբեր մակարդակներում անցկացվող նիստերը, տեղեկատվական ցուցանակները, հանդիպումներն ու քննարկումները:

Տեղեկատվության հավաքագրումն ու մշակումն Ակադեմիայում տեղի են ունենում տարբեր ստորաբաժանումներում՝ Ուսումնական վարչությունում, Որակի ապահովման կենտրոնում, ՄԿՏԿ կենտրոնում և այլն:

Ներկայումս հասարակության հետ կապերի պատասխանատուն պարբերաբար թարմեցնում է ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքը և ֆեյսբուքյան էջը, որտեղ հատուկ դաշտեր են հատկացված շահակիցների արձագանքի և հարց ու պատասխանի համար:

Դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանության և ցուցադրությունների կազմակերպման արդյունքում ևս հասարակությունը տեղեկանում է Ակադեմիայի գործունեության մասին:

Շահակիցներին ԵԳՊԱ գործունեության մասին տեղեկություն են ապահովում նաև «Ալբերտ և Թովե Բոյաջեան» ցուցասրահում կազմակերպված ցուցադրությունները:

Հետազոտություն

2014 թ.-ին ԵԳՊԱ-ում հիմնադրվել է հետազոտական կենտրոն, որի նպատակն է.

ա. Կազմակերպել և վերահսկել ԵԳՊԱ հետբուհական ուսուցումը (PhD),

բ. Կազմակերպել և վերահսկել բուհում իրականացվող հետազոտական գործունեությունը:

Ըստ այդմ ենթադրվում է.

1. Հետբուհական կրթական ծրագրի վերանայում ըստ Զալցբուրգյան 10 սկզբունքների,
2. Հետազոտական աշխատանքի խթանում՝

- Հայաստանյան և միջազգային գիտաժողովների մասնակցություն,
- Երկուստեք հրավիրյալ դասախոսությունների կազմակերպում և միջբուհական, միջմասնագիտական կապերի հաստատում, ներբուհական դասախոսությունների կազմակերպում,
- Դիմում-մասնակցություն ՀՀ Գիտության կոմիտեի և արտասահմանյան հետազոտական դրամաշնորհների մրցույթներին,
- Հետազոտական աշխատանքի համար ամբիոնների դասախոսների ծանրաբեռնվածության մեջ ժամերի ընդգրկում՝ ըստ բուհի որոշած ժամաքանակի
- Երիտասարդ մասնագետների հետազոտական աշխատանքի խթանում
 - ուսանողների գիտական հաջող հոդվածների ընդգրկում ԵԳՊԱ «Տարեգրքի» համարներում,
 - ավագ սերնդի մասնագետների հետ երիտասարդ հետազոտողների կամ ուսանողների միացյալ հետազոտական ծրագրերի կազմակերպում և իրականացում (ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակություն, հոդվածի պատրաստում, համատեղ դասախոսություններ, կատալոգների կազմում, գիտակրթական տարբեր ծրագրերի մշակում):

Հետազոտական աշխատանքի արդյունքների վավերացում՝

- գիտական աշխատանքի արդյունքների հրատարակություն՝ գրքի կամ հոդվածի տեսքով (վերջինը տպագրվում է ԵԳՊԱ Տարեգրքում)։

ԵԳՊԱ ունի իր գիտական ժողովածուն՝ Տարեգիրքը, որտեղ պարբերաբար հրապարակվում են բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հոդվածները: Տարեգիրքը պաշտոնապես գրանցված է ԲՈՀ-ի գիտական հրատարակությունների ցուցակում և 2013 թ. անվանվում է Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, սկսած 2014 թ.-ից այնտեղ տպագրվող հոդվածները պարտադիր գրախոսվում են նախքան ժողովածուում ընդգրկվելը: 2014 թ. ԵԳՊԱ հանդես է գալիս որպես Տարեգրքի հրատարակիչ, և հնարավորություն է ստեղծվում բուհի ուժերով հրատարակության պատրաստել նաև ուսումնամեթոդական ձեռնարկներ և մենագրքեր:

Հետազոտական աշխատանքի գնահատման համար արդյունավետ է տարեկան հաշվետվությունը, որը բացի հրատարակությունների ցանկից, ներառում է նաև ցանկացած այլ հետազոտական գործունեություն:

Ծառայություն հասարակությանը

Ցուցադրությունների կազմակերպում

ԵԳՊԱ-ն, լինելով գեղարվեստի միակ պետական ԲՈԻՀ-ը Հայաստանի Հանրապետությունում, մեծ պատասխանատվություն է կրում իր վրա հայկական մշակույթի տարածման գործում: Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներն ու շրջանավարտները հայկական մշակութային արժեքների կրողներն ու տարածողներն են:

Ակադեմիային կից գործում է «Ալբերտ և Թովե Բոյաջեան» ցուցասրահը, որտեղ պարբերաբար ցուցադրություններ են կազմակերպվում հասարակության համար: Ցուցասրահի մուտքն անվճար է: Ցուցադրությունների ցանկը տեղադրված է ԵԳՊԱ-ի պաշտոնական ինտերնետային կայքում, որը պարբերաբար թարմեցվում է: Ցուցադրությունների մասին հայտարարությունները հրապարակվում են համացանցում, մասնավորապես ցուցասրահի ֆեյսբուքյան էջում՝

<https://www.facebook.com/albert.boyajiangallery?fref=ts:>

Մասնակցություն ցուցահանդեսներին

ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմը, շրջանավարտներն ու ուսանողներն իրենց աշխատանքներով հանդես են գալիս քաղաքային, հանրապետական և միջազգային տարբեր ցուցասրահներում կազմակերպված ցուցահանդեսներին և ցուցադրություններին, կազմակերպում են անհատական և խմբակային ցուցադրություններ:

Դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանություն

Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպվում է ՀՀ Նկարիչների միության ցուցասրահներում: Պաշտպանությանը կարող են մասնակցել բոլոր ցանկացողները: Դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանությունը փաստում է Ակադեմիայի գործունեության թափանցիկության մասին:

Պաշտպանությանը հրավիրված գործատուների ներկայությունը նպաստում է լավագույն շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը:

Կրթություն՝ ողջ կյանքի ընթացքում

ՏԵՄՊՈՒՄ ծրագրի շրջանակներում Ակադեմիայում 2011 թ. ստեղծվեց և սարքավորումներով հագեցվեց համակարգչային մեկ լսարան, որտեղ Ակադեմիան, Երևանի պետական համալսարանի հետ համատեղ, անց է կացնում ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ:

Լսարանը ծառայում է նաև Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցների վերապատրաստման համար:

Նախապատրաստական դասընթացներ

Հաշվի առնելով, որ հանրակրթական դպրոցները չեն ձևավորում համապատասխան գիտելիքներ կերպարվեստի բնագավառում, ԵԳՊԱ-ն յուրաքանչյուր ուսումնական տարի կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ՝ դիմորդներին անհրաժեշտ գիտելիքներ փոխանցելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բենչմարքինգ – Կարևորագույն գործառնական տվյալների հավաքման և ներկայացման ստանդարտացված այնպիսի մի մեթոդ, որը թույլ է տալիս համադրել տարբեր հաստատությունների կամ ծրագրերի կատարողականությունը՝ լավագույն փորձի որոշման, գործունեության հիմնախնդիրների ախտորոշման և ուժեղ կողմերի բացահայտման նկատառումներով: Բենչմարքինգը տալիս է ուսումնական հաստատությանը (կրթական ծրագրին) իր աշխատանքային գործընթացը կազմակերպելու համար լավագույն փորձ և արտաքին հղման կետեր:

Գնահատում - բուհի կամ կրթական ծրագրի որակի համակարգված վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների:

Ինքնագնահատում – փաստական տվյալների համակարգված հավաքման, ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսների և ուսանողների հետ քննարկումների գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնագնահատման զեկույցում:

Ծրագրի հաստատում - գործընթաց, որով բուհը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և ծրագրային թիմի կարողությունը՝ իրականացնելու այն սահմանված ստանդարտներին համապատասխան:

Ծրագրի մշտադիտարկում (մոնիթորինգ) - գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները՝ բարելավող անհրաժեշտ միջոցառումների իրականացման լավագույն փորձի տարածման համար:

Ծրագրի պարբերական վերանայում - գործընթաց, որով բուհը գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը՝ նրա իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով և որոշում ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Կրթական չափորոշիչներ – պահանջներ գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ու չափի վերաբերյալ, որոնք տվյալ ծրագրի շրջանակներում պահանջվում են ուսանողից՝ հայցվող որակավորման շնորհման համար:

Հավատարմագրում - գործընթաց, որով պետական (կամ հասարակական) լիազոր մարմինը գնահատում է բուհի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար: Այն բաղկացած է երեք իրարահաջորդ փուլերից՝ ինքնագնահատում և համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:

Որակ – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ՝ «որակը որպես գերազանցություն», «որակը որպես համապատասխանություն նպատակին», «որակը որպես բարելավում» և այլն:

Որակի ապահովում - բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:

Որակի առդիտ – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինը ստուգում է բուհի կամ կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստական իրականացումը:

Որակի ներքին ապահովման համակարգ – կառավարման համակարգ, որով բուհը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է իր որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները:

Որակի բարելավում – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց:

Որակի փորձաքննություն – բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց:

Որակի կառավարում - որակի բարելավման նպատակով բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն:

Որակի վերահսկում – բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց:

Որակի քաղաքականություն – որակի ապահովման ասպարեզում բուհի ընդհանուր մտադրություններն ու սկզբունքները պաշտոնապես արտահայտող ձևակերպում:

Որակի մշակույթ - որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:

Որակի ապահովման Եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ – Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005 թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չափորոշիչներ և ուղենիշեր՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար:

Չափանիշեր – հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ – ձևակերպումներ են, որոնք սահմանվում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար ամհրաժեշտ պայմանները:

Փորձագիտական գնահատում – բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵԳՊԱ – Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

ԵԿԶՈՒ - Եվրոպական կրթական չափանիշներ և ուղեցույցեր

ՀԲ – Համաշխարհային բանկ

ՄԿԾ - մասնագիտական կրթական ծրագիր

ՄԿՏԿ - Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կենտրոն

ՄՈՒՀ – մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ – որակի ապահովում

ՈԱՇ – որակավորումների ազգային շրջանակ

ՈՆԱ – որակի ներքին ապահովում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Մշակված բոլոր ու գործիքները, դրանց նկարագրերը և հարցումների անցկացման կանոնակարգերը

Հավատարմագրման կարգ

ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկ

Ուսանողի գիտելիքի գնահատման հայեցակարգային դրույթներ